


ՑԱՆԵՑՆՈՂ ԼՈԹԵՐ - ԲԱՑ ԼԱՄԱՆԿ

Posted on August 2, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Ռուբէն Յովակիմեան, Փարիզ, 8 Յուլիս 2018

Կրթութեան եւ գիտութեան նախարար՝ **Արայիկ Յարութիւնեանին**, մշակոյթի նախարարուհի՝ **Լիլիթ Մակունցին**, սփիւռքի նախարար՝ **Մխիթար Հայրապետեանին** եւ անշուշտ անխուսափելիօրէն վարչապետին ու գարծող կառավարութեան բոլոր անդամներին, եթէ յարմար գտնէք եւ բարի լինէք փոխանցել:

...

Յարգելիներ՝,

Ներքոյ գրութիւնը ձեզ եմ հասցեագրում՝ յուսալով, որ իրար կը հասկանանք եւ առաւել եւս, որ յարուցած խնդիրներին դուք ծանօթ էք եւ ըստ էութեան ձեզ եւս պիտի անհանգստացնեն:

Պիտի խուսափեմ մայիս 8-ին եղածը գովերգելու կամ փառաբանելու. եղաւ ինչին շատերն էին սպասում, նաեւ երագում եւ հայութեան մի զգալի մասը ի սփիւռս աշխարհի բաւարարուած եւ գոհ է :

Ռուբէն Յովակիմեան, Փարիզ, 8 Յուլիս 2018

Կրթութեան եւ գիտութեան նախարար՝ **Արայիկ Յարութիւնեանին**, մշակոյթի նախարարուհի՝ **Լիլիթ Մակունցին**, սփիւռքի նախարար՝ **Մխիթար Հայրապետեանին** եւ անշուշտ անխուսափելիօրէն վարչապետին ու գարծող կառավարութեան բոլոր անդամներին, եթէ յարմար գտնէք եւ բարի լինէք փոխանցել:

...

Յարգելիներ՝,

Ներքոյ գրութիւնը ձեզ եմ հասցեագրում՝ յուսալով, որ իրար կը հասկանանք եւ առաւել եւս, որ յարուցած խնդիրներին դուք ծանօթ էք եւ ըստ էութեան ձեզ եւս պիտի անհանգստացնեն:

Պիտի խուսափեմ մայիս 8-ին եղածը գովերգելու կամ փառաբանելու. եղաւ ինչին շատերն էին սպասում, նաեւ երագում եւ հայութեան մի զգալի մասը ի սփիւռս աշխարհի բաւարարուած եւ գոհ է :

Այժմ հասել է ժամը շտկումներ անելու, եւ դուք ուղղակի մասնակիցներն էք: Պիտի փորձեմ որակում եւ գնահատականներ չտալ քանզի դեռ ճամբայ կայ անցնելիք եւ **«Ճտերը աշնանը հաշուել»**-ը շատ աւելի ճիշտ է:

Մենք նախընտրեցինք սպասել երեւոյթների զարգացմանը :

Թարմօրէն նորընտիր վարչապետի (Սերժ) ակնթարթային հրաժարականը մեզ

ենթադրել է տալիս, որ դրսից կարելուր եւ ազդեցիկ ուժերի միջամտութիւնը առկայ է, եթէ ոչ (մեր կարծիքով) այդքան փորձ եւ խարդախամոլութիւն ունեցող մէկը ի՞նչ տրամաբանութեամբ պիտի լքեր իր տաքուկ տեղը հանրօրէն յայտարարելով, թէ «**Նիկող ճիշտ էր, ես սխալուել եմ**», - նրան ազատելով կալանաքից: Աննախադէպ ելք:

Բազում են ծափահարողները ընթացիկ մաքրագործումների առիթով, այդ գործը թողնենք պատկան մարմիններին, բայց ցուցարարութիւնը եւ մատնութիւնները դարձել են հայկական արուեստ. Աստուած չանի, որ եթէ զգոյշ չլինենք, երեսունական թուականները կարող են կրկնուել, երբ մարդակերութիւնը «**Փեշակ**» էր (կարիք կա՞յ յիշեցնել Չարենցին եւ Բակունցին, Չապէլ Եսայեանի հետ միասին): Ներկայիս բողոքների ծաւալները եւ հետեւողականութիւնը, ապացոյց են, թէ ատելութիւնը եւ նողկանքը կլանային տիրող համակարգի նկատմամբ որքան խորն է ներծծուած բնակիչների ուղեղներում:

Աննախադէպ երեւոյթ էր, երբ մէկ մարդու նման փողոց ելան շատ-շատերը՝ ուսանող եւ գործաւոր, դպրոցական ու երաժիշտ, ուսուցիչ ու երկրագործ, այն աստիճան, որ ոմանք հրապարակը անուանում էին քաղաքական հասարակութիւն:

Այս տողերին անդրադառնալը գրելու շատ ցանկութիւն կամ կամք ունենալը չէ, այլ, լռելու բաւարար կամք չունենալը եւ այն յոյսը թէ տարիներ շարունակ լուծումի սպասող հարցեր կան, որ թերեւս այժմ ճիշտ ժամանակը կարելի է համարել նրանց ջրի երես հանելը:

Այո՛, յարգելիներ՛:

Անփութութեան ու կատարեալ անտարբերութեան հետեւանքով հսկայական կորուստներ ենք ունեցել մշակոյթի եւ ազգային արուեստի բարոյական նկարագրի բնագաւառներում: Առաջին հերթին կարելի է նշել մեր հիասքանչ մայրենին, որի մասին ձեզ աւելի փաստարկելու կարիք չկայ, քանի բոլորդ բանասիրական գիտելիքներով յագեցած էք, միայն թէ երբեմն չէք նկատում կամ վարժութեան պատճառով կարելուրութեան չէք արժանացնում: Դուք ներկայ էք լինում ըստ պաշտօնի եւ ստոյգ վկաներն էք, թէ ի՞նչ լեզուասպանութիւն է կատարում ազգային ժողովի ամբիոնից խօսք առնողների մեծամասնութեան ելոյթներում: Ո՞վ է թոյլ տուել երկրի գործադիրի փոխնախագահին իր հետ բազմաթիւ պատգամաւորներով մէկտեղ արտայայտուել շուկայական հայերէնով: Աշխարհասփիւռ հայերից նրանք, որոնք հայկական դպրոց են յաճախել, չեն կարողանում մարսել հայերէնի այն տեսակը, որ մեզ են մատուցում մեզ հասանելի հայերէնի հեռատեսիլային ալիքները: Ո՞վ է իրաւունք տուել «**Կենտրոն**» կայանի հիմնական հարցազրոյցները վարողներին՝ այդ թէ կին, իրենց յաճախ հետաքրքիր նիւթերը մատուցել կատարեալ «**Ա**»-**յախօսութեամբ**: Ո՞վ կամ ե՞րբ պիտի գտնուի մէկը՝ նրանց յիշեցնելու, թէ մեր պետական լեզուն գրական հայերէնն է եւ

պաշտպանուած է օրէնքով: Ձանձրալի չլինելու համար միայն ասեմ, որ նման օրինակները անսահման են ամէն օր, ամէն ժամ եւ բոլոր բնագաւառներում ամենուրեք: Անելիք շատ գործ կայ, ում բերանը կարելի է փակել առանց վնասի:

Յաջորդ խնդիրը, որ ձեր ուշադրութեան կ'ուզեմ արժանացնել երկու հայերէնի եւ երկու ուղղագրութեան համակեցութիւնն է:

Հռետորաբանութիւնից դուրս ելլելու համար եւ եթէ իրականում ցանկանում ենք սփիւռք-հայրենիք կապը լինի առողջ եւ հաւասար փոխըմբռնման մակարդակի, ապա անհրաժեշտ է, որ վերը նշուած նախարարութիւնները ձեռնարկեն լուրջ հանդիպում հայրենի եւ արտերկրի լեզուի մասնագետներին, **որ տեղի չունեցաւ արեղեանական փոփոխութիւնների ընթացքին**, ապա սեղանին դնեն եւ քննարկեն **ԱԶԳԱՅԻՆ** միակ եւ մատչելի նոր գրելաձեւ ունենալու գաղափարը՝ նպատակ ունենալով պարզեցնել դասականը եւ լրացնել ներկայ հայաստանեանը, անշուշտ միշտ հարազատ մնալով մեսրոպեան սկզբունքներին: Գաղտնիք չէ, որ այդպիսի մի քայլ անելու համար պէտք կը լինի պատնէշներ գրոհել եւ յամառօրէն պայքարել, բայց դժուարութիւնները միշտ յաղթահարելի են:

Հնարաւոր է որ ոմանք այս մտքերը ցնորքի տեղ առնեն, բայց ի՞նչ հոգ: Ո՞վ «**Տնորամիտ**» որակման պիտի չարժանանար, եթէ երեք ամիս առաջ ազդարարէր, թէ Սերժը, հաստատելով իր սխալը, աթոռը փոխանցելու էր Նիկոլին :

Տիրոջ ճամբաները անգուշակելի եւ անտեսանելի են:

Կարծում եմ վերը նշուած երեք նախարարները կ'անմահանան, եթէ այս «**Տնորոք**» գէթ մեկնարկը իրականացնեն:

Յարգանք՝

Ռուբէն Յովակիմեան

08-07-2018 (Փարիզ)

Յ. Գ.

Կը բաժնեմ հեղինակի բոլոր տեսակետները եւ խոնարհաբար կը ստորագրեմ իր անունին կից - Արմենակ Եղիայեան:

